Գուրգէնը միւս Արծրունի իշխաններուն հետ անցել է Ատրպատական եւ «անդ գումարեալ են ամենայն զօրք եւ ոսմիկք աշխարհիս արք կորովիք եւ պատերազմողք որք ոչ զառնան ի սրոյ»։ Զգուշացնում են, որ, եթէ պաշարումը չարունակուի, հաւանական է որ Գուրգէն օգնութեան գայ եւ մեծ հարուած տայ արքունի զօրքերին, «զի այր քաջ է եւ պատերազմող եւ միաբանք են որք ընդ նմա զօրքն եւ զանձինս ի մահ դնիցեն ի վերայ տանց եւ աշխարհաց եւ ազանց եւ տոհմից իւրեանց»։ Մանաւանդ որ Գուրգէնի ձեռքին են Զլմար, Սրինդ, Ճահուկ ամրոցները, այստեղից նա կարող է մեծ դժուարութիւններ յարուցանել խափանելու խսպառ արաբ զօրավարի ծրագիրները եւ «ըզքեզ կորակնեալ, սպառնում են իշխանները, ամօթալից ի պարտութիւն մատնեցին, որպէս զյառաջագոյն եկեալ հաղարապետն արքունուստ»։

Այս թուղթն արդէն քաւական է, որ պատմագրի կասկածամտութիւնը անտեղի համարուի։ Գուրգէնի անունով սպառնալիքը դիտաւորեալ հաշիւ է ահաբեկելու Բուղային։ Թուղթը գրուած է, հարկաւ, Աշոտի համաձայնութեամբ։ Իշխանները առաջարկում էին Աշոտին անձամբ ներկայանալ Բուղային եւ ցրել նրա կասկածը թէ հայերը ապստամբել են, եւ «բարձցի ի քէն ապստամբութիւնն զորմէ կարծեն ապստամբ լինել ի թագաւորէն»։

Աշոտին բարձրացնելու համար է միայն, որ պատմագիրն ուղում է նրան զոհ համարել մատնութեան կամ ուրիշների վեհերոտութեան։ Երբ Աշոտ գանգատւում է որ, այն ինչ ինքը հայր է եղել բոլորի համար, այժմ նրան ձգում են «համօրէն ընտանեօք ի բերան վիշապի»։ Իշխանները պատասխանում են. «ոչ կարեմք զդէմ ունել անհնարին ուժոյ բռնութեան արքունի, ոչ ամուրք պատրաստական առ ի յամրութիւն, ոչ ամրարք ի սմա բաւական. ուստի հարկ է քեզ երթալ, զի կարծիք ապրստամբութեան բարձցի եւ տառապելոյդ որ եկեալ յեցեալ են ընդունայն գաղթականութեամբ, եղիցի արձակուրդ ի տեղիս եւ աշխարհս զրաւեսցէ յասպատակէ»։

Պարզ է որ մատնութեան մասին խօսք չի կարող լինել։ Այս խօսքերը սրտցաւ հայրենասիրութեան չունչ են եւ ոչ դաւաճանութեան։ Պատմիչը խղճի դէմ գործ է կատարում, երբ Աշոտի քաջութեան զոհում է ուրիշների բարի անունը։

Աշոտը ներկայանում է Բուղային։ Փախստական ժողովուրդը ցրւում են իրենց տեղերը, իսկ Աշոտ իր կնոջ Հրանուշի եւ որդի Գրիգորը–Դերենիկի հետ գրկւում է Սամառա մի քանի ուրիշ իշխանների ընկերակցութեամբ։

Արաբ զօրավարի հերթական հոգսն էր բռնել նաեւ Աշոտի եղբօր Գուրգէնին։ Սա փորձում է հաշտուել այն պայմանով որ Վասպուրականի իշխանութիւնը իրեն տրուի ձերբակալուած եղբօր փոխարէն։ Միջնորդն էր իր մայրը՝ Հռիփսիմէն, Մասակերի դուստրը։ Բուղան ընդունում է պայմանը, բայց չուտով պարզւում է, որ այդ խարդախութիւն էր Բուղայի կողմից։ Մի քանի անյաջող ընդհարումներից յետոյ համոզուելով, որ զէնքով դժուար է ընկճել նրան, թուղթ է գրում Գուրգէնին եւ խոստանում տալ նրան Վասպուրականի իշխանութիւնը։

Գուրգէն հաւատալով, զէնքը վայր է դնում, գնում է ներկայանալու Բուղային։ Սա ընդունում է զինուորական պատուով, որի հետաքրքիր նկարագիրը տալիս է Թովմաս, ինչպէս երեւում է, քաղելով Շապուհ Բագրատունուց, որից առել է Գուրգէնի պատմութիւնը. «Նշանակս եւ դրօշս փողփողելով առաջի եւ գնել թագ իշխանական ի գլուխս, եւ ըզգեստս արքունական զանձեամբ եւ սուսեր ընդ մէջ ածեալ եւ հեծուցեալ ի մեծազարդ ջորւոջ եւ նժոյգս առաջի եւ զինի ի զարդ եւ ի դէն սպառազինեալք, եւ ձայնք փողոց եւ գոփիւնք թմբկաց եւ այլ երաժշտական գործոց հնչեցուցանէին շուրջանակի, բազմութիւն զինուորաց աստի եւ անտի, վարոցաւորք եւ սակրաւորք այսր անդր քշել զամբոխն զոռթեալ եւ քարոզն աղաղակէր թէ առաւ իշխանութիւնն Վասպուրականի ի ձեռս Գուրգէնի»։

Խարդախ թիւրք զօրավարի կողմից խաղ էր այս բոլորը։ Մի քանի օրից յետոյ Գուրգէնին ցոյց է տալիս պաշտօնական թուղթ, որպէս թէ գրուած խալիֆի կողմից, որով պատուիրում էր Գուրգէնին իր մերձաւորներով գրկել Սամառա։ Այսպիսով Գուրգէն եւս